«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ Նոր ուղու միջնակարգ

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Զարոյան

Ուսուցիչ՝ Կարինե Շերոյան

Բովանդակություն

Ներածություն----------3
Թեմայի արդիականություն----------4
Հետազոտության նպատակներ----------4
Հետազոտության հարցադրումներ----------5
Հետազոտության խնդիրներ----------5
Գլուխ 1 Ինչպե՞ս ճիշտ պլանավորել դասը----------6
Գլուխ 2 Դասապրոցեսի անցկացման մեթոդիկան----------7
Գլուխ 3 Անդերսոնի և Բլումի տաքսոնոմիաները----------13
Գլուխ 4 Գնահատում----------18
Եզրակացություն----------22
Գրականության ցանկ----------23

Ներածություն

Կրթական համակարգը մշտապես խնդրի առաջ է եղել ստեղծել մեթոդներ, որոնք կնպաստեն դասապրոցեսի արդյունավետության մեծացմանը ,այն կդարձեն սովորողի համար հետաքրքիր ,մատչելի ընկալելի և միևնույն ժամանակ կլինեն հիմնարար և կնպաստեն բարձր կարգի մտածողության զարգացմանը ։ Մշակվել են բազմաթիվ մեթոդներ ,մշտապես հակադրվել են ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները ,աշակերտակենտրոն և ուսուցչակենտրոն մոտեցումները , բայց և այնպես մի բան հստակ է՝ ուսուցիչը բացի մասնագիտական խորը գիտելիքներից պետք է ունենա հմտություն դասապրոցեսը դարձնելու արդյունավետ ,մշակելու և կիրառելու նոր մեթոդներ ,չվախենա նորարարություններից ,որոնք աշակերտներին առավելագույնս կներգրավեն դասապրոցեսի մեջ ։

Ի վերջո ուսուցանելը, ըստ էության, աշակերտներին սովորելու հարցում օգնելն է, և հետևաբար ուսուցիչը պետք է մտածի թե արդյոք ի՞նչ է տալիս տվյալ դասապրոցեսը աշակերտին։

ԻՆչպես ասել է Մ . Օստոգրադսկին՝ <<Ուսուցիչը մարդկային հոգու ինժեներն է>>։

Միևնույն ժամանակ հաջողակ ուսուցիչը պետք է կարողանա հոգ տանել սեփական հոգեկան առողջության մասին և տարիների ընթացքում դասավանդի նույն խանդավառությամբ քանզի ուսուցանելը բարդ և պատասխանատու աշխատանք է ։

Կրթության համակարգը կարելի դիտարկել որպես <<զարգացող գիտություն>>, որը մշտապես և շատ արագ զարգանում է, ներ են մուծվում բազմաթիվ մեթոդներ ու ուղեցույցեր ,որոնք հնարավություն են տալիս ուսուցչին հստակ և համակարգված վարել դասապրոցեսը ,այն դարձնելով արդյունավետ ու չնայած ամբողջ աշխարհում ուսուցիչները պնդում են, որ ցանկացած դա՛ս, առարկա՛, աշակե՛րտ տարբեր է և չափորոշիչները չեն կարող լինել միակ և համընդհանուր,յուրաքանչյուր դասապրոցես անկանխատեսելի է ու ուսուցչին սահմանափակել պետք չէ, բայց և այնպես, արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր դասապրոցես պետք է լինի պլանավորված։

Եվ տեղին է մեջբերել Գյոթեի հետևյալ խոսքերը՝ <<Ուսուցիչները պետք է իրենց մասնագիտության ողջ գծով կանգնած լինեն արդի գիտելիքների լիակատար բարձրության վրա>>։

Դասի պլանավորումը պարտադիր է, որպեսզի դասապրոցեսը լինի համակարգված, իսկ ամեն րոպեն թիրախային։ Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ պլանավորված դասի ընթացքում ուսուցիչը կարողանում է առավելագույնս հաղորդել, իսկ աշակերտը առավելագույնս յուրացնել ուսուցանվող նյութը։ Դասի լավ պլանավորում նշանակում է ,որ շատ որոշումներ, որոնք պետք է կայացվեր դասի ընթացքում, արդեն մտածված են մինչև դասի կայացումը։ Եվ եթե նախօրոք պլանավորված է դասը և դրա նյութատեխնիկական միջոցները, ապա ուսուցիչը ավելի շատ ժամանակ կունենա գնահատելու յուրաքանչյուր աշակերտի պոտենցիալ հնարավորությունները, թույլ և ուժեղ կողմերը,դասապրոցեսի թերություններն ու առավելությունները։

Հետազոտության թեմայի արդիականությունը՝

Թեմայի արդիականությունը պայմանավորված է պլանավորված դասի միջոցով արդյունավետ ու թիրախային դասապրոցես ունենալու և մաիաժամանակ աշակերտներին մշտապես դասընթացին ներգրավվելու անհրաժեշտությամբ։
Ժամանակակից ուսուցչի խնդիրն է արագ պտտվող կրթության անիվում քայլելու կամ ավելի ճիշտ կլինի ասել վազելու համընթաց։Արագ փոփոխվող մոտեցումները, մեթոդներն ու չափորոշիչները շատ հաճախ կարող են լինել հոգնեցուցիչ, այդ թվում նաև դասի պլանից հրաժարվելը կարող է հեշտ և գայթակղիչ թվալ, բայց և այնպես պլանավորված դասը ճանապարհին է դեպի բարձր մտածողությամբ օժտված աշակերտը։
Անկախ նրանից, թե ուսուցիչը փորձառու մանկավարժ է, թե սկսնակ ուսուցիչ, դասի պլանը դասապրոցեսը դարձնում է համակարգված, արդյունավետ և նպատակային։

Հետազոտության նպատակները՝

1. Վերլուծել և հիմնաավորել դասի պլանավորման անհրաժեշտությունը։
2. Վերլուծել և հիմնավորել դասի պլանավորման արդյունավետությունը 5 քայլաշարով։
3. Ներկայացնել Անդերսոնի և Բլումի տաքսիոնոմաներով բարձր կարգի մտածողության խթանման միջոցները։

Հետազոտության կարևոր հարցադրումները՝

1. Ինչու՞ է կարևոր դասի պլանավորումը
2. Որքանո՞վ է այն նպաստում դասապրոցեսի արդյունավետությանը
3. Ո՞րն է հետազոտության նպատակը

Հետազոտության խնդիրները՝

1. Ուսումնասիրել և բացահայտել դասի պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը,ինչը կնպաստի ուսման որակի բարձրացմանը
2. Սահմանել և ներկայացնել 5 քայլաշարով դասի պլանավորման օրինակներ

Ո՞ր առանցքային կոմպետենցիային է ուղղված հետազոտության նպատակի ուսումնասիրումը՝

Օրվա դասի թեմայի բովանդակությանը,նպատակներին,վերջնարդյունքներին համապատասխանող կարողունակությանը։

Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը ՝ 2րդ դասարան

Գլուխ 1

Ինչպե՞ս ճիշտ պլանավորել դասը

Դեռևս 13-րդ դարում Գլաձոր համալսարանի ուսուցչապետ Եսայի Նշեցին (1250/54-1338թ.) մատնանշում է,որ ուսուցիչը պետք է հանդես գա որպես նյութը մշակող, վերծանող, պարզաբանող: Ըստ ուսուցչապետի՝ ուսուցչի խոսքը պետք է լինի պատկերավոր, գրավիչ, կյանքից վերցված օրինակներով, նա պետք է նյութը մատուցի պարզ, հասկանալի, մատչելի և դասն անցկացնի համակարգված սկզբունքներով:
Դասի պլանը ուսուցչի ճանապարհային քարտեզն է այն մասին, թե ինչ պետք է սովորեն աշակերտները և թե ինչպես արդյունավետ ու հեշտ դարձնել սովորելու ընթացքը: Նախքան դասը պլանավորելը ուսուցիչը պետք է ուսումնասիրի դասի թեման, հասկանա տվյալ դասապրոցեսի, մատուցվող նյութի հիմնական նպատակները, որից հետո դասը պլանավորի արդյունավետ եղանակներով, կիրառի համապատասխան մեթոդներ, նշի, թե որ փուլում պետք է իրագործի մեթոդ, ապահովելու համար ուսման բարձր որակ:

Դասի պլանավորման հիմնական բաղադրիչները հետևյալն են՝

Դասի ճիշտ պլանավորման համար հարկավոր է՝
Հստակեցնել /սահմանել դասի նպատակները: Սա դասապրոցեսի ամենից կարևոր օղակն է, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել դասապրոցեսի վերջնական արդյունքին: Անհարժեշտ է ճիշտ և հստակ սահմանել դասի նպատակը, քանի որ ճիշտ սահմանված նպատակից է կախված ամբողջ դասապրոցեսի արդյունավետությունը:
Որպեսզի հեշտ լինի հասկանալ դասի նպատակը ուսուցիչը պետք է ունենա քանի հարցի պատասխաններ՝
Ո՞րն է դասի թեման:
Ի՞նչ եմ ուզում, որ աշակերտները սովորեն:
Ի՞նչ եմ ուզում, որ նրանք հասկանան և կարողանան անել դասի վերջում:
Ի՞նչ եմ ուզում, որ նրանք վերցնեն կոնկրետ այս դասից:
Շատ կարևոր է դասակարգել դասի նպատակները ըստ իրենց կարևորության: Այս քայլը հնարավորություն կտա դասաժամը կառավարելու և հասնելու առավել կարևոր նպատակներին:
Եվ եթե ժամանակի խնդիր կա պետք է հաշվի առնել հետևյալ հարցերը.
Որո՞նք են ամենակարևոր հասկացությունները, գաղափարները կամ հմտությունները, որոնք ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտները կարողանան ընկալել և կիրառել:
Ինչու՞ են դրանք կարևոր:
Եթե ժամանակը սպառվի, ո՞ր նպատակը հնարավոր չէ բաց թողնել:
Եվ ընդհակառակը, ո՞րը կարելի է բաց թողնել:
ԵՎ հատկապես շատ կարևոր է հստակեցնել վերջնարդյունքները:
Դասապրոցեսի ավարտին պետք է անդրադառնալ դասասկզբում սահմանած վերջնարդյունքներին:

1. Դասարան
2. Առարկա
3. Դասի թեմա
4. Դասի տեսակ
5. Դասի տևողություն
6. Դասի նպատակ
7. Դասի խնդիրներ

8. Վերջնարդյունք
9. Ուսուցմնա մեթոդներ
10. Ուսումնական նյութեր և պարագաներ
11. Դասի սկիզբ
12. Դասի ընթացք
13. Դասի ավարտ
14. Գնահատում

Գլուխ 2
Դասապրոցեսի անկացման մեթոդիկան
Դասի պլանավորումը՝5 քայլաշարով

Դասի հաջողությունը մեծապես կախված է դրա անցկացման, աշակերտին դասանյութը ճիշտ մատուցելու, մեթոդներից և հնարաներից, որոնք օգտագործվում են դասապրոցեսի ընթացքում։
Յուրաքանչյուր մեթոդ և հնար պետք է օգտագործվի դասի համապատասխան փուլերում, հաշվի առնելով տվյալ դասարանում աշակերտների կրթական մակարդակը։
Ճիշտ կազմակերպված, պլանավորված դասապրոցեսն է հաջողված դասի բանալին և ընդհակառակը այն ճիշտ չկազմակերպելու դեպքում հնարավոր չէ առաջացնել որևէ հետաքրքրություն և ունենալ հաջողված դաս։
Այս հետազոտական աշխատանքի ընթացքում կուսումնասիրենք դասի պլանավորումը 5 քայլաշարով, կքննարկենք նշված մեթոդով դասի պլանավորման օրինակներ։

Քայլ 1-Դասի սկիզբ՝ խթանում

Այս փուլը շատ կարևոր է , և այս փուլից է կախված դասապրոցեսի հետագա ընթացքը ։
Այս փուլում աշակերտները իմանում են՝
ի՞նչ է սպասվում իրենց դասի ընթացքում
ինչու՞ է դա կարևոր
ինչպե՞ս է դա կապված նախկին գիտելիքի հետ
Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իր սեփական փորձով հասկանա, թե, ո՞ր դասարանում դասի սկսման մեթոդներից ո՞րն է ավելի հաջողված և ո՞րն է կիրառելի ։
Դասը կարելի սկսել հարցերով տվյալ թեմայի շուրջ։
Պարզել թե աշակերտները ի՞նչ գիտեն կամ ի՞նչ են մտածում տվյալ թեմայի վերաբերյալ։ Դա անելու տարբեր եղանակներ կարելի է կիրառել, ուղղակի հարցը հնչեցնել, գրել գրատախտակին և հանձնարարել աշակերտին գրել պատասխաններ կամ նմանատիպ այլ հարցեր, կարելի է խրախուսել նաև փոքր խմբերով քննարկումները։ Բավականին հաջողված հնարներից է բոլորիս հայտնի՝ **մտագրոհը,** որի ընթացքում հատկապես կարևոր է, որ աշակերտները ուսուցչի հնչեցրած հարցին արագ, առանց երկար մտածելու պատասխաններ տան։ Այս մեթոդով ուսուցիչը հայտնաբերում է նաև աշակերտների սխալ պատկերացումները տվյալ թեմայի շուրջ և կարողանում է թիրախային շեշտադրումներ կատարել։
Կարելի է սկսել տեսանյութ դիտելով տվյալ թեմայի շուրջ, տեսանյութը կարող է ուղղակի հետաքրքիր նյութ լինել կամ ունենալ փոքրիկ հասկացություններ ուսուցանելու նպատակ։
Տվյալ թեմայի բովանդակության հետ կապված առարկաները դասընթացում ներգրավելը ևս հետաքրքիր մեթոդ է դասի սկսման այն կարող ենք ուղղակի ցուցադրել կամ խնդրել աշակերտներին շոշափելով հասկանալ ինչ առարկա է և ինչ կապ ունի տվյալ թեմայի հետ։
Տարրական դասարաններում երբեմն կարիք է լինում թարմացնել աշակերտներին և

կարելի է աշակերտներին ոտքի կանգնեցնել և թույլատրել նստել միայն, երբ կպատասխանեն ձեր հարցին թեմայի շուրջ:
Կարելի է նաև դասը սխալներից և օրինակ քննարկել այն սխալները որոնք շատ են կատարվել առաջադրանքներում:
Այս փուլում կարող ենք կիրառել հետևյալ հնարները ևս՝ Պրիզմա, 5 բոպեանոց շարադրանք, կանխագուշակումների աղյուսակ, խաղ-վիկտորինա և այլն:

2-րդ քայլ՝ Նոր նյութի ներկայացում

Այս փուլում պետք հստակեցնել նոր նյութի հիմնական դրույթներն ու հասկացությունները, սահմանել նպատակներն ու վերջնարդյունքները, որոնց դասի ավարտին հնարավորինս պետք է հասնել: Նյութը չպետք է լինի ծավալուն, հարկավոր է այն ներկայացնել հնարավորինս մատչելի: Որպեսզի ուսուցչի մատուցած նյութը լինի մնայուն հարկավոր է կիրառել այնպիսի հնարներ ու մեթոդներ որոնք կնպաստեն գիտելիքի ամրապնդմանը և արդեն ունեցած գիտելիքների հետ կապակցմանը: Ուսուցիչը պետք է կիրառի արդյունավետ մեթոդներ դրանք հարմարացնելով տվյալ դասարանի, տվյալ առարկայի առանձնահատկություններին: Այս փուլում պարբերաբար ընդմիջումներով կարելի է կրկնել նյութի որոշակի ծավալը, շեշտադրել հիմնական հասկացություններն ու դրույթները,նպատակներն ու վերջնարդյունքները, այնուհետև անցնել հաջորդ ծավալին: Դասապրոցեսի ընթացքում պետք է կարևորել ոչ միայն մատուցված գիտելիքը, այլև դրա՝ ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրումը և արժևորումը: Նոր նյութը առավելագույնս ընկալելու համար հարկավոր է այն մատուցել մեկից ավելի ձևերով, նյութը բանավոր ներկայացնելը պետք է ուղեկցվի պատկերներով, նշումներով, լսումներով:
Հնարավորության դեպքում պետք է կիրառել տարբեր ասոցացիաներ, գծապատկերներ, պատկերներ, տեսանյութեր, գործողություններ:
Ավանդական ուսուցման մեթոդներից մեկը՝ ուսուցչի միտումնավոր արված սխալը տվյալ թեմայի վերաբերյալ, նույնպես կարելի է հաճախակի կիրառել հասկանալու աշակերտների յուրացման մակարդակը: Կախված մատուցվող նյութի բարդությունից ու ծավալից, աշակերտների պատրաստվածությունից, ներառական աշակերտներից պետք է պատրաստ լինել միևնույն նյութը մատուցել տարբեր մեթոդներով: Այս փուլում կիրառելի են հետևյալ հնարներն ու մեթոդները՝ T-աձև աղյուսակ, Գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, Փոխգործուն նշանների համակարգ, Խորանարդում, Խճանկար, Երեք բանալի և մեկ կողպեք, Շրջագայություն պատկերասրահում:

Քայլ 3 Ուղղորդված /գործնական աշխատանք/

Այս փուլում աշակերտները ուսուցչի ուղղորդմամաբ կատարում են թիմային, գործնական աշխատանքներ: Շատ հաճախ այս փուլը դուրս է մնում դասապրոցեսից: Այս փուլում կարելի է կիրառել պոպ կորն, բառ-բանալի, կենաց ծառ հնարները: Ուսուցման նորարարական մոտեցումները շատ ավելին են քան ուղղակի դասավանդելը կամ դաս սովորելը, ժամանակակից ուսուցիչը պետք է կարողանա՝ սովորեցնել համագործակցել աշակերտներին, չսահմանափակել աշակերտներին: Այս փուլում կարևոր է, որ բոլոր աշակերտները լինեն ներգրավված: Հարկավոր է աշակերտների մոտ զարգացնել նյութի վերաբերյալ կառուցուղական արձագանք ստանալու և

ստրամադրելու կարևոր հմտությունները, հարկավոր է ուսուցանել աշակերտներին՝ տալ իրենց դասընկերներին բովանդակալից մեկնաբանություններ նյութի վերաբերյալ: Սովորելու լավագույն միջոցներից մեկը սովորեցնելն է և հենց այս փուլում պետք է տալ հնարավորություն աշակերտներին ճիշտ ձևով վերարտադրելու ստացած գիտելիքները:

Քայլ 4 – Ինքնուրույն աշխատանք/ իմաստավորում/

Մենք բոլորս գիտենք թիմային, գործնական աշխատանքների «թերությունը» դա է որոշ ինտրովերտ աշակերտների ստվերում մնալը:

5 քայլաշարով դասի պլանավորման առավելությունն է հնարավորություն տալ գնահատել վերը նշված աշակերտների գիտելիքի յուրացման մակարդակը նաև ինքնուրույն աշխատելով: Այս փուլում աշակերտները կատարում են ինքնուրույն աշխատանքներ առանց ուսուցչի և ընկերների օգնության, դա կարող է լինել օրինակ՝ թեստային աշխատանքների տեսքով. . . . կարելի է հանձնարարել աշակերտին նկարազարդել բանաստեղծությունը, իր խոսքերով բնութագրել բանաստեղծին կամ ուսուցանվող նյութը:

Քայլ 5 Դասի ավարտ /ամրապնդում

Այս փուլը ևս շատ կարևոր է դասապրոցեսի արդյունավետության համար: Որպես համեմատություն կարող ենք դասապրոցեսը համեմատել շարադրության հետ ,նշված երկու դեպքում էլ պետք է լինի նախաբան և վերջաբան ,առանց վերջաբան շարադրությունը ավարտվում է անհասկանալի,կտրուկ և առաջացնում է բազմաթիվ հարցականներ: Դասապրոցեսը ևս պետք է ունենա վերջաբան:

Ամերկյան գրականության մեջ օգտագործվում են ջերմացում և սառեցում տերմինները (warm up and the cool down) որպես դասընթացի նախաբան և վերջաբան: Դասի սկզբում հարկավոր է տաքացնել, ջերմացնել աշակերտներին, իսկ ավարտին աստիճանաբար մարել <<կրակը>> և սառեցնել:

Կան դասի ավարտի բազմաթիվ տարբերակներ որոնցից ամենա հաճախ կիրառվողը՝<<ի՞նչ սովորեցինք այսօր>> պարզ հարցն է և կարևոր է, որ հարցին պատասխանեն աշակերտները ինչը կօգնի հասկանալ ուսուցչին արդյոք նյութը լիարժեք կամ ճիշտ է ընկալվել:

Տարբերակներից կարելի է նշել նաև 60 վրկ. -ի մեթոդը-մի քանի աշակերտի հանձնարարվում է 60 վրկ. -ի ընթացքում խոսել տվյալ թեմայից, նշված մեթոդով միաժամանակ խթանվում է նաև խոսքի զարգացումը: Կարելի է կիրառել խրախուսանքների տարբերակներ գեղեցիկ, վարժ, կամ բովանդակալից պատմող աշակերտների համար: Այս փուլում հաճախ կիրառվող մեթոդներից է՝ ելքի քարտ, ԳՈՒՍ. . . Օրինակ եթե մեր դասը տեխնոլոգիան է կամ կերպարվեստը որպես դասի ավարտ աշակերտներին կարելի է հանձնարարել կարգի բերել աշխատատարածքը, որպես կարևոր սովորության:

Այս փուլում քննարկվում է նախորդ բոլոր փուլերը, մատուցված նյութի հիմնական դրույթներն ու հասկացությունները, նյութը համակարգվում է և ափոփվում ինչպես նաև տրվում են արտադասարանային աշխատանքները:

5 քայլով պլանավորման ձևանմուշ՝

Ուսուցչի ազգանուն, անուն-
Առարկա-
Դասի թեման-

Դասի տեսլականը	**Դասի նպատակը**	*Կարևոր դրույթները* Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	*Անհրաժեշտ նյութերը* Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ:
Դասի ընթացքը, մեթոդները	**Գնահատում** Նկարագրեք ինչպես պետք է չափեք մասնակիցների առաջընթացը կամ դասի նպատակի իրականացումը: Կցեք ամենօրյա գնահատումը, որը պետք է լինի համաձայնեցված, հավակնոտ, չափելի և իրատեսական:.		
	Դասի սկիզբ Ի՞նչ են սովորելու աշակերտները: Ինչու՞ է դա կարևոր: Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: Ինչպե՞ս են սովորելու: Կատար՛ր հիմա... Խթանիչ վարժություն, եթե կա:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
		:	
	Նոր նյութի ներկայացում Ի՞նչ են սովորում աշակերտները : Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: Արդյո՞ք այս ինֆորմացիան բխում է կարևոր դրույթներից:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Ուղղորդված աշխատանք Արդյո՞ք բազմակի հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու, օգտագործելու ներկայացված նոր նյութի գիտելիք/հմտությունը: Արդյո՞ք վարժությունները դասավորված են հեշտից դժվար: Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվումէ, եւ աշակերտներին տրվում աջակցություն կամ ուղղորդումկարեւոր դրույթները յուրացնելու համար : Ինչպես եք կազմակերպելու ընկալման ստուգումները: Ինչ եղանակով եք անդրադառնալու սխալներին:Արդյո՞ք ներկայացված նոր նյութը նախապատրաստել է աշակերտներինինքնուրույն աշխատելու : Արդյո՞ք կա դասը լսելու, մասնակցելու եւ համագործակցելուհստակ ձեւակերպված սպասելիքներ:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Ինքնուրույն աշխատանք Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու, կիրառելուստացած գիտելիքները : Արդյո՞ք ինքնուրույն աշխատանքում		

	ընդգրկված է նպատակին տանող բոլոր գիտելիք/ հմտությունները: Ինչպես են կազմակերպվելու շտկումները:		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Դասի ավարտ		
	Ինչպես են աշակերտներըամփոփում եւ ներկայացնում իրենց յուրացրած նյութի կարեւորությունը:Ինչպե՞ս է երեւում, որ աշակերտները յուրացրել են հիմնական դրույթները եւ հասել դասի նպատակին: Ինչո՞ւ/ինչպես են աշակերտները ընդգրկված լինելու:		
	Տնային աշխատանք, եթե նախատեսվում է:		
	Վերլուծություն/անդրադարձ(լրացվում է դասից հետո):		

Գլուխ 3
Անդերսոնի և Բլումի տաքսոնոմիաները

Այս տաքսոնոմիաները կրթության նպատակները սահմանող դասակարգման համակարգեր են և ներկայացնում են սովորողի ուսումնառության զարգացումն ու առաջընթացը:

Անդերսոնի տաքսոնոմիան Բլումի տաքսոնոմիայի վերամշակված տարբերակն է, և ի տարբերությունի Բլումի սկզբնական տաքսոնոմիայի տվյալ դեպքում ուսուցման մեջ ներգրավված ճանաչողական գործընթացները նկարագրելու համար օգտագործվում են բայեր, բառեր որոնք ցույց են տալիս գործողություն, գոյականների փոխարեն: Օրինակ <<գիտելիքի>>-ի փոխարեն Անդերսոնի տաքսոնոմիան օգտագործում է <<հիշել>>: Անդերսոնի տաքսոնոմիան ստեղծագործության գաղափարը ներկայացնում է որպես ուսուցման ամենաբարձր մակարդակ, այն վեր դասելով գնահատումից:

Այս ուղեցույցերը հնարավորություն են տալիս ուսուցչին գնահատելու աշակերտի մտածողության մակարդակը՝ ցածր մտածողության մակարդակից (Հիշել)մինչև միջին մտածողության (Ըմբռնել, Կիրառել) և Բարձր մտածողության մակարդակ (Վերլուծե, գնահատել, ստեղծել):

Այլ կերպ ասած նշված տաքսոնոմիաների ճանաչողական տիրույթն ունի կատեգորիաների հիերարխիա, որոնք արտացոլում են ուսուցման գործընթացը պարզից բարդ՝ հիշել տեղեկատվություն նոր բան ստեղծելու համար:

Այս տաքսոնոմիաների առանձնահատկությունը համընդանուր կիրառելիության հատկությունն է, դրանք կիրառելի են տարրական դասարաններից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ:


տեղծ
Ձևակերպել, մշակել, նախագծել, կառուցել, առաջարկել
Գնահատել
Քննադատել,արժևորել,գնահատական տալ
Վերլուծել
Ուսումնասիրել,համեմատել,տարբերակել
Կիրառել
Փորձել,կիրառել,օգտագործել,վերածել գործողությունների
Ըմբռնել
Բացատրել,նկարագրել,,քննարկել
Հիշել
Պատմել,ցույց տալ,թվարկել,կրկնել

Բլումի տաքսոնոմիա

Բենջամին Բլումի երիցուկի մեթոդը՝



1. Պարզ հարցեր–ո՞վ, ե՞րբ, Ի՞նչ Օր. ՝ Ո՞վ էր փորձում դառնալ պարուհի:
2. Մեկնաբանող հարց– Ի՞նչու էր ուզում պարուհի դառնալ:
3. Հստակեցնող հարցեր– Արդյոք Լուսինե՞ն էր ուզում դառնալ պարուհի: Որ իրեն ծափահարե՞ն, ցույց տան հեռուստացույցով
4. Գնահատող հարց– Լավ էր,թե՞ վատ,որ Լուսինեն ցանկանում էր պարուհի դառնալ:
5. Ստեղծագործական հարց–Ի՞նչ կլինի,եթե Լուսինեն դառնա պարուհի:
6. Պրակտիկ հարց–Ինչպե՞ս կվարվեիր դու,եթե լինեիր Լուսինեի դերում

Դասի պլանի օրինակելի նմուշ

Առարկա՝ Մայրենի
Դասարան՝ 2-րդ
Դասի թեման՝ Երևան
Դասի տիպը՝ Գիտելիքների ամրապնդման,կարողությունների,հմտությունների ձևավորման դաս
Դասի նպատակները
> Գիտելիք
.Ընդլայնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները
.Հարստացնել բառապաշարը
.Զարգացնել որոշ պատկերացումներ հայ ժողովրդի պատմության , մշակույթի վերաբերյալ
> Կարողություն
.Ձևավորել անսովոր իրավիճակներում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություն
.Ձևավորել հարցեր տալու կարողություն
.Զարգացնել դերերով կարդալու կարողություն
.Ձևավորել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողություններ
> Վերաբերմունք
.Ձևավորել հոգատար վերաբերմունք հայրենիքի նկատմամբ
>Արժեք
.Խրախուսել և խթանել հայրենիքի հանդեպ սերը
Խաչվող հասկացություններ
.Ժամանակ և տարածություն
.Քայլ 1 Դասի սկիզբ/խթանում (3-5 ր.)
Դասի ընթացք
.Քայլ 2 Հիմնական մաս (20-25ր).
.Քայլ 3 -առաջադրանք 6- կատարել ուսուցչի օգնությամբ
.Քայլ 4-առաջադրանք 7 -ինքնուրույն աշխատանք
.Քայլ 5 դասի ամփոփում և անդրադարձ(7-10ր.)

Գնահատում(5ր.)



Դասի վերջնարդյունքները

. դերերով ընթերցել տեքստը՝ համապատասխան արտահայտչական միջոցներով ու հույզերով

. Սովորի <<աչքի առաջ>> բառերը օգտագործելով բառակապակցությունների և նախադասությունների մեջ

. Սովորի հարցեր տալ, ձրակերպի հարցեր առաջադրված պատասխանների համար

. Ճանաչի Երևանի դրոշը,զինանշանը ,օրհներգը

. Ամրապնդի Է—Ե ուղղագրության իմացությունը

. Գնահատի դասի ընթացքում իր ձեռքբերումները

Կապը ՀՊՉ տարրական ծրագրի վերջնարդյունքների հետ

. S1,S7,S8,S9,S14,S16,S17,S18,S22,S23,S25

Ուսուցման ոճեր

1. **Վիզուալ**(տեսողական)

Դիտում է դասագրքի տեքստը,պատկերները,նկարազարդումները

2. **Աուդիալ** (լսողական)

Լսում է ընկերների,ուսուցչի խոսքը,Երևանի օրհներգը

3. **Կինեսթետիկ**

Բացում է դասագրքի QR կոդը՝կատարելով տրված առաջադրանքները,կատարում է գրավոր առաջադրանքները

ԿԱՊԿՈՒ սովորողների առաջադրանքները

Նվազագույն

. ՈՒնկդրել Երևանի հիմնը

. Գունազարդել Երևանի դրոշը

. Դիտել նկարազարդումները

Գլուխ 4
Գնահատում

Գոյություն ունեն գնահատման 3 փոխկապակցված տեսակներ՝ հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ:
Ուսումնական գործընթացի հիմնական բաղադրիչը ձևավորող գնահատականն է, ինչի շնորհիվ բացահայտվում է աշակերտի և ամբողջ դասարանի առաջընթացը, ձեռքբերումները և նաև դժվարությունները:
Ձևավորող գնահատումը օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և աշակերտների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումն օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները:
Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ, հարցերի դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյո՞ք աշակերտները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:
Կան հնարներ որոնք օգնում են ուսուչին գնահատելու սովորողների ձեռք բերած գիտելիքները:
Այս հնարները լավ միջոց են սովորողների ինքնուրույն աշխատանքները խթանելու,ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

<<Ջերմաչափում>> մեթոդ
Այս մեթոդի նպատակն է՝ բացահայտել թե սովորողները որքանով են ճիշտ կատարում հանձնարարությունը:
<<Հարցադարան>>- ՄԻ շարք հարցադրումներով ուսուցիչը որոշում է , թե որ գիտելիքը կամ հասկացությունը չի յուրացվել սովորողների կողմից: Օր. ՝ Ի՞նչ նոր բան այսօր իմացանք: Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր:Ի՞նչն էր դժվար: Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞:
<<Խմբագրական խորհուրդ>>-Այս հնարը սովորողներին շարադրություն գրելուն նախապատրաստելու շատ հարմար միջոց է:
<<չորս անկյուններ>>-աշակերտները արտահայտում են իրենց վերաբերմունքը նախապես հնչեցրած պնդումների վերաբերյալ՝
1. Լիովին համաձայն եմ
2. Համաձայն եմ
3. Համաձայն չեմ
4. Բացարձակ համաձայն չեմ

Ձևավորող գնահատման 5 գաղափար
Ձևավորող գնահատումն ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով:
Ձեւավորող գնահատման գործիքները բազմազան են, և ցանկալի արդյունքի հասնելու

համար պետք է կիրառել նպատակային եւ հետեւողականորեն: Կարելի է սկսել ձեւավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

Գաղափար 1. Արդյունավետ սկիզբ եւ ավարտ:

Կարեւոր է դասի համար ապահովել արդյունավետ սկիզբ եւ ավարտ՝ օգտագործելով առաջին եւ վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ հարցաշար: Ընդ որում, եթե էլեկտրոնային ռեսուրսները բավարար չեն, կարելի է խնդրել սովորողներին փոքրիկ թղթիկների վրա գրել յուրացրած եւ ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները եւ գցել երկու տարբերակված արկղիկների մեջ: Սա կօգնի հստակեցնել թեմայի յուրացման ամբողջական պատկերը:Իսկ եթե հնարավորություն կա օգտագործելու Google Forms, Poll Everywhere, Edulastic հարթակները, ժամանակի մեծ տնտեսում կլինի:

Դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց աշխատանքին եւ ձեռքբերումներին, նշելով՝ 3 բան, որ յուրացրել են, 2 բան, որոնց մասին կուզեին ավելին իմանալ եւ 1 բան, որ չեն հասկացել:

Ապա սովորողները կարող են շրջել սենյակում եւ ծանոթանալ միմյանց նշումներին,լրացումներ կատարել իրենց թերթիկներում:

Կարելի է նաեւ սովորողներին առաջարկել ինքնագնահատման հարց՝ «Ի՞նչը ես այլ կերպ կանեի հաջորդ դասին»:

Գաղափար 2. Նվազ ազդեցություն ունեցող թեստեր

Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս եւ օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների եւ գաղափարների յուրացումը:

Կան հավելվածներ, օրինակ՝ Zipgrade-ը (https://www.zipgrade.com/), որոնց
օգնությամբ կարելի է արագ դուրս բերել թեստային թերթիկները եւ կիրառել: Նվազ ազդեցության թեստերի կիրառումը հարմար է նրանով, որ դրանց արդյուքները չեն ազդում կիսամյակի գնահատականի ձեւավորման վրա, այլ յուրաքանչյուր սովորողի համար բացահայտում են, թե թեմայի իմացության ինչ մակարդակ ունեն տվյալ պահին:

Գաղափար 3. «Մեծ եղբայրդ հետեւում է քեզ»

Ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում.

• Ընկերոջդ նամա՛կ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները:

• Նկարի՛ր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման:

• Մտածի՛ր նյութի շուրջ և հետո քննարկի՛ր ընկերոջդ հետ:

Ուսուցիչը շրջում է դասարանում, նշումներ է անում կամ լրացնում է նախապես պատրաստած դիտարկման թերթիկը, որն ավելի հարմար է և հնարավորություն է տալիս ավելի նեղացնելու սովորողներին ուսումնասիրելու դիտանկյունը և կատարել արդյունավետ գրառումներ:

Գաղափար 4. Ձևաչափը՝ հարցազրույց

Որպեսզի սովորողներն ավելի խորանան ուսումնասիրվող թեմայի մեջ, կարելի է օգտագործել հարցազրույցի, բանավեճի եւ քննարկման ձեւաչափերը:
Կարելի է կազմակերպել նաև 3-րոպեանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ: Սրա համար կարիք կլինի շատ ժամանակ ծախսել, սակայն հարկ չկա հարցազրույց անցկացնել բոլոր թեմաների եւ նախագծերի ժամանակ:
Որպես այլընտրանք՝ կարելի է սովորողներին բաժանել զույգերի և տալ հետադարձ կապի տարբերակ.
• Ասել ընկերոջը, թե ինչն իրեն դուր եկավ նրա ելույթում:
• Տալ մեկ հարց եւ պարզաբանել, թե ինչպես կարելի է բարելավել պատասխանը:
Ինքնամփոփ սովորողների համար կարելի է օգտագործել Flipgrid, Explain Everything, կամ Seesaw, հավելվածը, որը հնարավորություն կտա պատասխանները գրել նախապես:

Գաղափար 5. Արվեստ

Այն միջոցները, որոնք նախատեսում են դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, նույնպես կարող են ձեւավորող գնահատման գործիքներ դառնալ:

Սովորողները կարող են նկարել, կոլաժներ եւ քանդակներ ստեղծել, ինչը նրանց հնարավորություն կտա միավորել անցած նյութը մեկ ամբողջության մեջ: Նրանք կարող են բեմականացում ներկայացնել որեւէ գրական թեմայով կամ անգամ պարով ցուցադրել բջիջների բաժանումը, ծաղկի բացվելը, բույսերի ծլելը եւ այլն:Ձեւավորող գնահատման գործիքները տարբեր են, եւ յուրաքանչյուր դասավանդող կարող է ընտրել իրեն եւ իր դասարանին առավել հարմարը: Կարեւորն այն է, որձեւավորող գնահատումը բարձրացնի յուրաքանչյուր սովորողի՝ իր իսկ ձեռքբերումների, առաջընթացի գիտակցումը, իսկ դասավանդողին հնարավորություն տա ժամանակին փոխելու ուսուցման ընթացքը, հասկանալու սովորողների կարիքները՝ ամփոփիչ գնահատմանը ավելի պատրաստ դարձնելու համար:

✧

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում պարզ դարձավ՝

. Դասի պլանավորումը կարևոր և անհրաժեշտ է դասապրոցեսը ճիշտ կազմակերպելու և դասաժամը արդյունավետ օգտագործելու համար։

. 5 քայլով դասի պլանավորումը արդյունավետ և հարմար եղանակ է, այն հնարավորություն է տալիս սովորողին ուսուցանվող թեման ուսումնասիրել,հետազոտել, բացահայտել և ստեղծագործել։ Այս եղանակով դասի պլանավորման դեպքում հնարավոր է կիրառել բազմաթիվ մեթոդներ ու հնարներ դասի տարբեր փուլերում,ինչի արդյունքում թեման առավել հեշտությամբ է յուրացվում ու ամրապնդվում ։

. 5 քայլով դասի պլանավորման դեպքում ուսուցչի աշխատանքը հեշտանում է, քանի որ հստակ նշվում է յուրաքանչյուր քայլում ուսուցչի աշխատանքը, նպատակը, վերջնարդյունքները, խնդիրները, խաչվող հասկացությունները, ներառարկայական և միջառարկայական կապը, արժեքային համակարգը, սովորողի դիրքորոշումը, պատճառը և հետևանքը։ Այս բոլոր քայլերը ի վերջո հանգեցում են վերջնարդյունքին։

. Լայն հնարավորություն է տալիս սովորողներին՝ ինքնագնահատել, փոխադարձ գնահատել, հայտնել իրենց կարծիքն ու հիմնավորել այն։

. Հստակ նշվում է, թե որ կարողությունն է պետք զարգացնել թեման ուսուցանելու ընթացքում։

. նշվում է կապը ՀՊՉ-ի հետ։

Իմ աշխատանքում ներկայացրել եմ 5 քայլով դասի պլանավորման օրինակներ, ուսումնասիրել ու կիրառել եմ առանձնահատկությունները։

Այսպիսով՝ այն բազմաբովանդակ, համալիր և արդյունավետ միջոց է ճիշտ կազմակերպելու դասի պլանավորումը։

Գրականության ցանկ

1.Ա. Հ. Սվաջյան և ուրիշներ: <<Ուսուցչի օգնականի ձեռնարկ>, մեթոդական ուղեցույց: Երևան 2022
2. Վ. Ա. Սարգսյան,Ելենա Ջիլավյան ,<<Մայրենի 2 մեթոդական ուղեցույց>>:
3. (kznakgnahatum.blogspot.com)

4.Սերոբ Խաչատրյան <<Ուսուցման արդյունավետ հնարներ>> Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020
5. Կրթության, գիտության նախարարություն, Տեղեկագիր, Երեւան, 2011